


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒԼՆ
 Ե. ՓՈՐՈՍՅԱՆ
 Նամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ ըրազի
 ԳԱՂԱՔԱՆ (Նաւակահատի)
 Թիւ .



E. TOROSSIAN
 Direc.-propr. du journal arménien
 ARCHALOUICE
 LE CAIRE (EGYPTE)
 Boite Postale No.

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|----------------------|----|
| ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ | |
| Տարեկան ողջ դահիւն . | 60 |
| Վեցամսեայ » | 35 |
| ՕՏԱՐԻ ԵՐԿՐՆԵՐ | |
| Տարեկան ծրանիք » | 20 |
| Վեցամսեայ « | 12 |

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
 Կանխիկ վճարելի են

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ

Երկրագունդիս խաղաղութիւնը ապահովուած է, եթէ հոն Չինաստանի մէջ Պօքսընները, որոնք նենգաժէտ գլխոյ մը երկնամ խամաճիկներու երևոյթն ունին աւելի, հանդարտ կենան, և եթէ տէրութիւնները համաձայնութեան մը յանդիմ իրենց մէջ :

Աշխարհիս խաղաղութիւնը ապահովուած է, եթէ Թրանսկալի խնդիրը վերջանայ կատարեալ գոհունակութեամբ յաղթողի և յաղթուողի : Երկրիս խաղաղութիւնը ապահովուած է, եթէ Արևելեան խնդիրը վերջանայ երիտասարդ թիւրքերու համաձայնութեամբ հայոց հետ և ասոնց համաձայնութեամբ Սուլթանին հետ : Վերջապէս երկրիս բնակիչները կրնան հանդարտ բռն մը քաշել կատարեալ խաղաղութեան մը հովանիին տակ, եթէ Պրանսի մոռնայ Ալգասլօրէնը . եթէ Գերմանիա իր ձեռքը ետ քաշէ Փոքր Ասիոյ երկաթուղիէն . եթէ Իտալիա յաջողի իր անխիտանակները ուղղութեան բերելու, և Թրիէստիէն ու Ափրիկեան Տրիպոլիոյ տիրանալու ջերմ փափաքէն հրաժարի . եթէ Աւստրիա Պալատներու մէջ գերակայելու իղձը ձգէ և Սալոնիկը իւրացնելու մարտը թողու, եթէ Ռուսիա ետ կենայ թուրքիոյ գործերուն միջամտելէ, և իրեն ապացոյց իր բարեացակամութեան հանդէպ Օսմանեան կայսրութեան, Բրիտանական տէրութեան ձեռքը յանձնէ՝ իբր պատանդ՝ իր ծայրագոյն Արևելքի ստացուածքները Սէվասթոպոլի նաւարանին հետ . եթէ Անգլիան չափաւորէ իր ամեն ինչ կուլ տալու փափաքը, և վերջնականապէս որոշէ այլ ևս աշխարհիս չորս կողմը դիպուածով խռովութիւններ չ'հանել, անոնցմէ օգտուելու նպատակաւ : Եւ ահա այսչափ միայն :

Ինչպէս կը տեսնուի գիւրին է ոսկեղէն դարուն վերադառնալ, եթէ կարող ըլլայինք խել մը երեսներ վերցնել աշխարհիս կեանքէն : Դժբաղդաբար բուն գոհարութիւնն ալ հոն է՝ ըստ երևութիւն : Լսեցէ՛ք և գատեցէ՛ք :

Ճիշտ այն միջոցին, յորում Պօքսըրը կոչուած խամաճիկները խաղցնող գլուխը կուահելով որ իր միտքը գուշակուեցաւ՝ ձեռքը կը թուլցնէ կամացուկ մը և խաղը լըմնալու կը մօտենայ, ահա անգիէն Ռուսիան որ միւս տէրութեանց հետ համերայնորէն

կը գործէր՝ և որ կ'երևայ թէ հոտ մ'առած է, կ'ուզէ իր զօրագունդերը ետ քաշել աւարկելով որ ինք ջերմ փափաքող է Չինաստանի ամբողջութեան, և չ'ուզեր անոր հողէն ափ մը խառնել իրենին : Թէ Ռուսիան անկեղծօրէն կը խօսի, այս մասին նոյն իսկ Վեհ . Չարն ալ որոշ պատասխան մը չ'կրնար տալ . սա պարզ պատճառաւ որ մանաւանդ այժմեայ քաղաքականութեան մէջ ժամը ժամին չ'նմանիր : Ինչ որ ալ ըլլայ, արգէն հեռագիրները կ'ըսեն որ Պրանսի ալ մտադիր է Ռուսիոյ հետեւելու : Եւ այս ալ խիստ բնական է, երկու գաշնակիցներուն մէջ : Այսպիսի որոշման դէմ Անգլիական թերթերը թէեւ քիչ մը կը պոռան ըսելով որ եթէ եւրոպական զօրքերը ետ քաշուին, անկէ ետք անկարելի է որ օտարականները ապահովաբար ապրին Երկնային կայսրութեան մէջ : Բայց մեզի կուգայ որ թերթերուն յարուցած այդ ազմուկը երևոյթները ազատելու համար է ստակ : Իսկապէս Բրիտանական կառավարութիւնը իր սրտին մէջէն կը ծափահարէ Չինական խնդրոյն այսպիսի անակնկալ և իրեն համար նպատակաւոր ելք մ'ունենալուն : Վասնզի փոքր Թրանսկալիցիները բոլորովին կաշկանդած ըլլալով այդ ահագին կայսրութիւնը, նա չը պիտի կրնար Չինական կարկանդակէն խոչոր և իւզոտ մաս մը հանել իրեն : Ուստի Անգլիան գոհ է : Իտալիա և Աւստրիա մեծ շահեր չ'ունենալով այդ հեռուոր կայսրութեան մէջ չ'են կրնար իրենց ձայնը լսել ընել յիշեալ խնդրոյն մէջ : Իսկ Թուրքիան անիկա իր արածելու ոչխարները ունի, հետեւաբար չ'ըջանիր ասանկ մանտրոսիկ գործերով զբաղիլ : Անգլի կը մնայ Գերմանիան : Կիյեօմ, կ'ըսուի, խիստ բարկացած է Ռուսիոյ այդ առաջարկութեան վրայ : Ճիշտն ըսելով Գերմանիոյ կայսրը, որ կ'երևայ թէ քաշելու, աստանդական ճամբորդելու մասին թափառական հրէայի հետ նարդի ելած է, իրաւունք ունի տակնուվրայ ըլլալու :

Վեհափառ մարդը հազիւ ճամբու գըրաւ իր ամենէն մեծ և ամենէն կարող զօրապետներէն մին՝ Ֆէլտ Մարէշալ Ուալտերսի որ պիտի երթար հոն՝ Երկնային կայսրութեան մէջ՝ ամբողջ եւրոպական բանակներուն պիտի հրամայէր . իր տրամադրութեան տակ ունենալով բարեկամ և թրջնամի ազգերուն բանակները, հազիւ իր Օգոստափառ տէրը՝ Կիյեօմ Բ . յոխորտանօք աչքերը կը պտտցնէր երկրիս վրայ, իբր թէ ըսել ուզէր իր թագակիր պաշտօնակիցներուն :

— Տեսա՞ք մի, ըրի չ'ըրի ձեր զօրքերը իմ զօրապետիս ձեռքը տուի :

Եւ ահա անգիէն Ռուսիա չուելու, մեկնելու նշանը կուտայ . ո՛վ գիտէ թերևս Կիյեօմ Բ . ին խորհածը Նիգոլա Բ . ն ալ խորհած ըլլայ :

Եւ երբ Ֆէլտ Մարէշալ Ուալտերսի հասնի վերջապէս իբր ընդհանուր հրամանատար այդ երկնային հողին վրայ՝ զո՞վ պիտի գտնէ հոն . գաղտնի՞ք : Թերևս մի քանի հազար հայրենակից զինուորներ :

Անժխտելի է որ երբ տէրութիւնները գործադրեն իրենց զօրագունդերը քաշելու որոշումը, գէշ խաղ մը խաղացած պիտի ըլլան Ն . Վ . Կիյեօմ Բ . ի :

Պօէրներն ալ դադար առած չ'ունին գէշ խաղեր խաղալէ Անգլիացիներուն : Բրիտանական բանակը հակառակ իր անհամեմատելի գերակայութեան՝ թուով և ուղմամբերով՝ հակառակ իր գերահռչակ հրամանատարներու, միշտ մեծամեծ դժուարութեանց կը բաղխի ճամբայ մը բանալու համար դէպ յառաջ :

Բայց ինչ որ միշտ և անդեհ-հատ յառաջ կ'երթայ, սա Սուլթանի ջնջողական քաղաքականութիւնն է : Կարծես Չինական գործերը վերստին ախորժակը բացին թուրքիոյ հողին, որ դարձեալ ծծեց 200, ոմանք կ'ըսեն 350 Հայերու տաքուկ և կազդուրիչ արիւնը : Այս կատարածը, ինչպէս կը յիշեն ընթերցողները, տեղի ունեցաւ Սպաղանք գիւղին մէջ, Սասնոյ բազմատանջ հողին վրայ : Սուլթանական պաշտօնեայնները կը տեղեկագրեն որ աւազակներ էին, որոնք պատժուեցան . դեպքանները՝ ընդհակառակը՝ « խաղաղակենցաղ գիւղացիներ խողտուցիք » պոռալու միտումներ ունեցան, և թերևս լուրջ և ազդու բառերով արտայայտէին ալ իրենց այդ զգացումը, երբ չարամտօրէն վրայ հասաւ յոբելեանը քաղաքապետի գահակալութեան Սուլթանաց Սուլթանին (°) և լուսավառ ու շքեղ տօնախմբութիւններ և հրախաղութիւններ առժամապէս նսեմացուցին արեան բնական գոյնը և խեղդեցին զոհերու, որբերու, այրիներու, աւուանգեալներու սրտասարսուռ կոծն ու հառաչները :

Ըսելիք չ'կայ՝ տէրութիւնները համաձայն են, ազգերը բարեբաստ . հետեւաբար կրնանք ապահովապէս ըսել « առ դուրս է Ռսիկար կամ սկիզբն երկանց » :

ՀԱՆՂԵՍ ԲԱՑՄԱՆ

ԼՍԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՑՄԱՆ ԳԱՀԻՐԷԻ

Ըստ կանխորոշ յայտարարութեան՝ անցաւ կիրակէ, 9 Ապրիլ . տեղի ունեցաւ Լսարան—Ընթերցատան բացման հանդէսը Պաշտօն—Մուրաբի մէջ : Սուսն բազմութեամբ մը լեցուած էր սրահը :

Առաւօտեան ժամը 10 1)Ձ ին Մայր Գիւղանի կողմանէ Պ. Երուսնդ Գեղեցիկէճեան բացաւ հանդէսը , որուն յաջորդեց Տալուրիկի երգը , զոր երգեցին մեծաւ յաջողութեամբ խումբ մը երիտասարդներ : Տալուրիկէ վերջ Գործադիր ժողովոյ կողմանէ Պ . Օննիկ Թումանյան շնորհակալութիւն յայտնեց հանդիսակաւանաց՝ որք փութացած էին իրենց ներկայութեամբը քաջալերել այս նորահաստատ Ընթերցատունը :

Պ . Օննիկ Թումանյան ըսաւ յետոյ . « . . . Ի՞նչ բան կը պակաս մեզ ունենալու համար թերթի . գրքեր , եւ Լսարան : Միթէ դրամը . բայց չէ՞ որ ա՛յնքան պուճակներ կը վատնուին այստեղ , բուրբերու երկրին մէջ , բոլորովին սին զուարճութեանց համար եւ միթէ հաճոյքներու աղնուագոյնը փոխադրածաբար օգնելու գործին մէջ չի՞ կայանար :

« Ուրեմն ինչո՞ւ բարենպաստակ հաստատութեան մը համար գոց պահենք մեր քսակները : . . . Ձենք կարծեք որ գտնուի ձեզմէ մէկը որ խաւարը փնտռէ լոյսը տապալելու մտօք » : Յետոյ ի վեր հանեց սա կէտը թէ՛ պէտք է որ մեր սանձանին մէջ մեր պարտականութիւնը կատարենք :

« Գաղով մեր գործունէութեան , ըսաւ , ժողովուրդին մէջ եւ ժողովուրդով պիտի աշխատանք մանէ՛ առաջ Լսարան—Ընթերցատան աւելի ամուր կերպարանք մը տալ » :

Կը յուսայ թէ մօտ ապագայի մը մէջ ժողովրդեան տրամադրութեան տակ պիտի կարենան զինել համեմատ գրադարան մը :

Պ . Թումանյանի ատենաբանութենէն յետոյ երգուեցաւ Մայր—Արաքսին , որ նոյնքան յաջողութիւն գտաւ որքան Տալուրիկը :

Մայր—Արաքսին վերջ Կիլիկիացի պատանի մը Պ . Ներսէս Գ . Գրիգորեան գրաւոր բանաստեղծութեամբ մը իր զգացած անհամեմատ ներստեղծութիւնը կը յայտնէր այսօրինակ հաւաքման մը առթիւ . յետոյ Պ . Շաւարշ ալ մը երգեց որ խիստ գնահատուեցաւ ներկայներէն :

Այս ատենաբանութեանց եւ երգերուն յաջորդեց տասը վայրկեանի չափ դադար մը , եւ ներկայք նոյն միջոցին պատուասիրուեցան օջաւակներով :

Դադարը արդէն լրացած էր . երբ Գործ . ժողովոյ Ատենապետը Տօք . Էվլիեան՝ հրաւիրեց իրաւարանական վարժարանի ուսանող Պ . Յաւրութիւն Շամլեանը որ երկու խօսք ալ ինք արտասանէ :

Ահաւասիկ Պ . Շամլեանի արտասանած ձառին գլխաւոր մասերը :

Պարտնէ՛ր

Եղաւ ժամանակ մը , երանելի ժամանակ մը , որ ունէինք քիւլու մը . ուր քանիցս լսարաններ տրուեցան եւ սարքուեցան բնտանեկան երեկոյթներ . բայց դժբաղդաբար , այսպէս թէ այնպէս , կարճատեւ եղաւ իր կեանքը : Անոր փակումէն ի վեր , սանկ ըսենք , զգալի պակաս մը ունեցանք մեր շուրջը . բարեբաղդաբար ասորը զարմանին վրայ խորհողներ պակաս չէին , եւ այսօր՝ շնորհիւ ատոնց՝ կ'ունենանք Լսարան—Ընթերցատուն մը , որոյ բացումը ահա տեղի կ'ունենայ :

Կարծեմ հարկ չ'կայ շեշտել կարեւորութիւնը ընթերցատան մը . զարգացեալ ազգեր շատ լաւ գիտեն անոր արժէքը . հետունքը կրթաւոր պէտք չ'կայ օրինակներ յաւաք բերելու . համար Մեր շուրջը , Գահիրէի մէջ , կը տեսնենք արդէն թէ եւրոպական գաղութը ունի իրեն առանձին , ուրոյն քիւլու , հաւաքումներու վայրերը : Վերջիւս պէտք ունի իրեն օգուտը , նա՛ մանաւանդ արտասանմանի մէջ գտնուող մեզ Հայոցս համար .

նախ՝ քիւլուի մը միջոցով շատ աւելի բարոյացուցիչ է քան թէ սրճարանի մը , երգեցիկ—սրճարանի մը եւ կամ « պառ » ի մը միջոցով : Երկրորդ առաւելութիւնը քիւլուի մը եւ ասիկա աւագ կարեւորութիւն ունի մեզ համար— սա է թէ , մենք հայերս օտարութեան մէջ չուտով կ'օրինակենք դանուած երկիրներու սովորոյթը , եւ կամ թէ ուրիշ բանով , մենք չ'ունենալով բաւական գորաւոր ազգային նկարագիր , զարգացեալ օտար միջավայրը զմեզ շուտով իր մէջ կը ձուլէ . ցաւալի է ասիկա , բայց իրողութիւնը իրողութիւն լինելէ չի գաղբիր : Հեղինակ մը , որոյ անունը չ'եմ յիշեր այս պահուս , շատ յաջող կերպիւր նմանցուցած է հայերը հեղուկ մարմինի մը՝ որ ինչ ամանի մէջ գրուի նոյն ամանին ձեւը կ'առնէ : Ահա արտասանմանի մէջ ազգայնութեան գոյութեանը ըստպահանջոյ այս վտանգին դէմ գէթ միջոցաւ աստիճան մը իրելու պատուար կը ծառայէ քիւլուը :

Կը շնորհակարտեմ ընթերցատան հաստատմանը շնորհատող մարմինը . թէպէտ հաստատութիւնը սկզբնապէս օրութեանը մէջ խոնարհ է , բայց ստի՛կ : Խնդիր չ'է : Ընթերցատունը ժողովրդական է , պայմանները դիւրամատչելի . եւ ազնուակեանական հովեր առնող կեդրոնի մը մէջ ժողովրդական ընթերցատան մը հաստատումը միթէ չ'անկանութենէ գուրկ պարագայ մ'է : Ինչպիսիք իս նախով ժամանակուան մը համար անոր ծախքերը ապահովուած են եղեր , ուրախալի է ասիկա . առաջին քայլը ահա առնուած է . այլ եւս հանրութեան կը մնայ իւրովսանն ընել ասոր տեսականութիւնը ապահովցնելու համար :

Մայր Արաքսին կրկին երգուեցաւ նորագոյն եղանակաւ :

Պ . Կ . Գ . Ուղուեան , որ վերջերս Ջրուեցիկութեան հոս վերադարձած է , նոյնպէս բանաստեղծ . իր խօսքերը հաճելի տպաւորութիւն մը թողուցին ունկնդիրներուն վրայ :

Պ . Շաւարշի ընկերակցութեամբ « Թնդայ հիմանց նոր Աւարայրը » երգուեցաւ , որուն յաջորդեց Պ . Թումանյանի՝ որ փակեց հանդէսը :

Կարելի է ընել թէ՛ հանդէսը յաջող կերպիւր եղաւ . ներկայք հաճելի տպաւորութեան մը տակ մեկնեցան . յուսալի է թէ ժողովուրդը չի պիտի զլանայ իւր լուսնի տալ հաստատութեան մը՝ ուսկից պիտի կարենայ ուղղակի օգտուել . գործը ինքնին բաւական պերճասու է եւ ռեֆրալ ի պէտք չ'ունի . կը շնորհակարտեմ Ընթերցատան այժմու Գործադիր մարմինը , եւ կը մաղթենք որ աւելի քաջալերեալ , ժողովրդեան կողմանէ դասձ իւր այս առաջին ընդունելութենէն— հաստատ քայլերով յառաջանայ զէպի իր նպատակը՝ որ է տարածել ժողովրդեան մէջ ԸՆԹԵՐՑԱՑՄԱՆ ԳԱՀԻՐԷՆԸ :

3

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Գ

Նոր Կեանքի ի եւ Անախիս ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առնիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբազրատուս գիւմեն , զիւրազին վայնս գնելու :

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Պատ . Տնօրէն « ԱՐՇԱԼՈՅՍ » ի Աստ

Կիրակի օրը Տիար Ս . Փափազեանի ընտկաթանին մէջ տեղի ունեցած հաւաքման իր ունկնդիր ներկայ գտնուելով իրենց վիճաբանութեանց ընթացքին մէջ , երկու կարեւոր խնդիրներու , այսինքն Լսարան—Ընթերցատան նախկին Գործ . ժողովոյ օրինաւոր Ատենապետին անօրինի միջոցներով տապալման եւ ընկերութեան հիմնական կանոնադրին մինչեւ ց'արդ

անվաւեր մնալու մասին՝ իբր ամենէն իրազէկը , ցոյց տուած բացատրութիւններս , հոն հաւաքուողներէն ոմանք , ըստ իրենց բարի սովորութեան խեղաթիւրելով , եւ իրենց դարձուցած մեքենայութիւնները ինձ զգուսանք ու արգահատանք ազգելով , երբ աւելի խոհեմ միջոց լուծութիւն պահել նախամեծար համարեցի , այդ պարզապէս առիթ տուած է իրենց՝ ժողովրդեան մէջ տարածայնելու՝ իբր թէ ես համոզուած ըլլամ իրենց տուած բացատրութեանց , որով կը ջանան իմ արժանապատուութիւնս վերաւորելով ուղղակի կերպով վարկարկ ընել զիս :

Իրաց այս անսխալ գրութեան առջեւ անունը համար , սաստկապէս կը բողոքեմ հըրապարակաւ եւ կը յայտարարեմ թէ՛ Լսարան—Ընթերցատուն ընկերութեան կազմութենէն մինչեւ ցայսօր , եկրիկներ են որ ի գործ կը դերուին ընկերութեան սրտին մէջ :

Հարկ չ'եմ տեսներ յ'անուանէ նշանակել այդ եկրիկներուն անունները , որովհետեւ անոնք ամենուս ալ ծանօթ են եւ ամեն ոք կը ճանաչէ զանոնք :

Հետեւաբար ամեն անոնք որք կը փափաքին վերագրեալ երկու կարեւոր խնդիրները մօտէն ուսումնասիրելով ճշմարտութեան իրազէկ ըլլալ , յ'ամենայն դէպս կրնան ինձ դեմել որ պատրաստ եմ շօշափելի փաստերով եւ կենդանի վկաներով ապացուցանել սոյն ապօրինութիւնները եւ ուրիշներ :

Ապտ . 9 ի գումարման Իբր ունկնդիր ներկայ մը ՄԻՄՕՆ ՋՐՈՎԵԱՆ

Գահիրէ 10 սեպտ . 1900

ՀԱՐՑՈՒՄ ԱՌ Պ . Ե . ԳԱՐԱԳԱՇ

Նոր—Օր ի Չորեքշաբթի թուոյն մէջ երևցած ձեր մէկ բողոքագիրը առիթ կը ներկայանայ ինձ հարցնել ձեզ թէ՛ Օրոտս . ՁԵ ի կրկնոյն Պաշտօն—Մուրաբի մէջ ամենայն օրինաւորութեամբ գումարուած Լսարան—Ընթերցատուն ընկերութեան տարեկան Ընդհ . ժողովոյն ներկայ էիք թէ ոչ :

Եթէ ներկայ էիք , ո՞ր անկիւնը մտած էիք որ ստուար բազմութեան մը տեսութենէն վերաբար էք :

Վստահ եմ թէ՛ այս հարցմանս բացասական բառէն ուրիշ պատասխան մը չ'ունիք տալու :

Ուրեմն , պարո՞ն . ի՞նչ համարձակութեամբ կ'ստորագրէք նմանօրինակ գրութեան մը տակ . կ'երեւի թէ՛ ձեր ստորագրութիւնները շատ աւտան ծախելու վարժուած էք . եւ կ'ուզէք որ գործածենք Վէյլերի երեւակայած ակնոցներէն մէկ մէկ հատ . արդեօք այսպիսի տեղ ձեւակերպութիւններով կ'ուզէք ժողովուրդը գայթակղեցնել :

Ուստի , պարո՞ն , այս տեսակ անտեղութիւններ պատուաւոր երիտասարդներու գործ չ'ըլլալը հաստատելով , ինքզինքս պարտաւոր կ'ըզամ զձեզ խրատելու որ , ուրիշ առիթ ուրիշ մը խմբագրած նոյնօրինակ անճշմարտութիւններու տակ փայլեի զգուշանաք , մանաւանդ երբ հարկը պահանջէ ձեր խանութի աշկերտին հետ քով քով ստորագրելու . որովհետեւ թէ՛ ձեր անկեղծութեան եւ թէ՛ գործունէութեան վարկը (եթէ երբեք ունեցած էք կամ կրնաք ունենալ) վտանգուած կ'ըլլայ :

Լսարան—Ընթերցատան Օրոտս . ՁԵ ի ըստ օրինի գումարուած Ընդհ . ժողովոյ ներկայներէն Ա . ՄԱՐԻԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՉԻՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Չինացիք , իրարու հետ հաղորդակցելու համար , տակաւին կը գործածեն աշտարակներ , որոց վրաց կրակ կը վառեն :

Հեռագրերու այս կերպը երեք հազար տարի առաջ ծնած է :

Ամենուրեք ճամբուն վրայ գտնուող բլուրներուն վրայ կը շինէին տեսակ մը աշտարակներ երկուքուկէս մեթր բարձրութեամբ և փոքր ծխնելոյղի մը ձեւով : Տեսակ մը վառարան էր սա , որուն մէջ կրակ կը վառէին եթէ թշնամիք արշաւէին ցորեկ ատեն աղւարարութիւնը կ'ըլլար մուխի և գիշերը բոցի միջոցաւ :

Չինական աւատականութեան դարուն 500 տարի առաջ նախ քան Վերիստոս՝ այս միջոցով կը հրաւիրէին ճորտերը կայսեր հրամանին :

Այս մասին կը պատմուի որ վեհապետ մը , որուն իշխանութեանը ժամանակ կայսրութիւնը անկման վիճակի մէջ էր , սիրելի մը ունէր այնքան մեծամեծ որ երբէք չ'էր կրցած զայն խնդացնել : մտածեց որ թերևս պիտի յաջողէր հեռագրոյն միջոցաւ օգնութեան կանչելով իր բոլոր ճորտերը , որոնք փութացին հնազանդիլ իրենց վեհապետին հրամանին : Եւ սիրական խաթունը , տեսնելով այն մեծ բազմութիւնը որ այնքան հեռուներէն եկած էր և ամբողջ կայսրութիւնը յուզուած այն միակ պատճառաւ որ ինք չ'էր ուզեր խնդալ , սկսաւ խնդալ բարձրաձայն : կայսրը գոհ եղաւ , ճորտերը ոչ բայց և այնպէս կատարած վերադարձան՝ իրենց սեղերը :

Բիշ ժամանակ ետքը , թշնամին արշաւեց և կայսրը լուսավառել տուաւ բոլոր աշտարակները : Ոչ ոք եկաւ օգնութեան : Ճորտերը , համոզուած ըլլալով որ կայսեր և իր սիրականին մէկ նոր քմահաճոյքին զոհ պիտի ըլլան , փոռնուանքանը չ'տեսնել ձեռացուցին : Թշնամին գահը տապալեց : կայսրը ողջ ողջ թաղեց . լեզուն , աչքերը , աւանջները , քիթը ձեռքերուն և ոտքերուն եղունգները կտրելէն հանելէն , խլելէն ետ :

Թ Ե Ր Թ Օ Ն
Ի Ն Չ ՈՒ Գ Ե Ն Բ Յ Ա Ջ Ո Ղ Ի Ր

ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . — Առէ՛ , խերք կ'անիծեմ . (աթոռը վերցնելով կը յարձակի իր ոտիս վրայ այնպէս որ ամենքը յոտնկայս երկու մասի բոժնուած գոռում , գոչում , շանթ , կայծակ առանց ծեծուողութիւնի , ինչպէս շատ անգամ ընկերակցութեանց մէջ կը պատահի : Այս խառնաչիտ լիճակին մէջ Ատենադպր էֆ . մեղմիւ ոսկեղինիկ մատենաները թեւին սակը առնելով հանդարտութեամբ կը մեկնի) :

ՏԵՍԻԼ Բ .

Տեսարանն է սիւնազարդ սրճար ևի մը խորը . ուր սովորաբար ՀԱՅՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ , իրենց արտաբնիկ կարգի ժողովները կը գումարեն :

ՆԻՍՏ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — (Ժամացոյցը նայելով) վստահ եմ թէ անդամք մեծամասնութիւն կազմած են . հետեւաբար ատենը բացուած է :
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Այո՛ , կրնանք շարունակել . Ազգայեան Էֆէնտին ՈՍԿԻ մատենաները առնելու գնացիք է , թերևս քիչ մը ուշանայ , բայց անպատճառ պիտի գայ
ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . — Թաթեան Էֆէնտի հետ միասին էինք ի Նիւ Պառ , ուր որ է հիմակ նա ալ կուգայ :
ՏԵՐՊԱՊԵՏ ԷՖ . — Աւելի լաւ կ'ընէիր եթէ հետք բերէիր
ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . — Այո՛ , բայց իՇՏԷ՛ , ահաւաստիկ եկաւ : (Թաթեան Էֆէնտի ժպիտ ի շքր-)

քը : Եւ սիրականը պարտաւորուեցաւ իր սէրը շնորհել թշնամի վեհապետին :

Նոյն իսկ հիմա , հակառակ հեռագրաթերերու չինացին բոլորովին չ'ըբեց այդ հինաւուրց սովորութիւնը , վասնզի չինացին պահպանողական է ամենէն առաջ :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԲԱՂԻԱՒՈՐ ՀԱՅ ՄԸ . — Կը տեղեկանանք թէ Հրէից Բարեգործական վարժարանին կիրակի օրուան վիճակահանութենէն Յակոբ Աշքեան անունով հայ մը 1000 ֆրանկոնց առաջին պարգևը շահած է :

— ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ . — Անցեալ օրեր տեղական թերթերը կը ծանուցանէին թէ՛ Տամատ Մահմուտ փաշա Աւստրիական շոգենաւով նոյն օրերը Աղէքսանդրիա կը սպասուէր :

Նոյն հաշուով Մահմուտ փաշա այժմ Եգիպտոս կը գտնուի :

— ԱՆԻՇԻԱՆԱԿԱՆՆԵՐԸ . — Ոստիկանութիւնը Ասուանի մէջ ձերբակալեց Իտալացի անիշխանական մը , զոր յանձնեց Գահրէի Իտալական հրապարտարանին : Միևնոյն ազգութենէն ուրիշ երեք անիշխանականներ ևս ձերբակալուեցան Սուէզի մէջ , որոնք ամբաստանուած են , կ'ըսեն , 150 ոսկւոյ դոզութեան մը համար :

— ԻԻՌՊԷՆ ԿՕՀԻՅԷ . — Առաջիկայ թրուով պիտի հրատարակենք ՕՈՒՈՒ ի խմբագիրներէն Իււպէն Կօհիէյի մէկ գրութիւնը , որ Սուլթանին 25 ամեակին նուիրած է հայապաշտպան և արժանաւոր դրիշը :

— ԿԱԽԱՂԱՆ . — Մէրգատո Հաքա , Պիւրէ բնակող Տիկին Ակիանօի սպաննէշը , դատապարտուեցաւ կախուելու Աղէքսանդրիոյ մէջ :

Թունս ներս մտնելէ եւ ազնուաբար բարեւելէ վերջ նստաւ : Անմիջապէս ետքը ներս մտաւ նա և Ազգայեան Էֆէնտի , տրտում , տխուր նախ ձեռքով , ապա յօնքերով եւ հուսկ ուրիշ բերանացի մանրամասնօրէն բացատրեց թէ՛ չ'էր յաջողած իրեն յանձնուած պաշտօնին մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ի՞նչ ըսել է այս , ի՞նչպէս կարելի է Ընդհ . Ժողովոյ մը ստորակները իւրացնել :

ԱԳՍՊԵՆ ԷՖ . — Այո՛ , չ'ուզեր յանձնել , մեր կողմանէ ամեն պէտք եղածը խօսեցանք . ամեն համոզիչ միջոցներ ի գործ դրինք . բայց ի զո՛ւր

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Չ'իշխեցուցի՞ք իրեն թէ՛ կարելի է հետեւանքը ծանր լինի . իր ըրածը պարզապէս ըմբոստութիւն մ'է :

ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . — Պարզապէս խայտառակութիւն է

ԹԱԹՕԵԱՆ ԷՖ . — Եթէ չ'ուզեր յանձնել , ուրիշ տեսակ մը ծախու կ'առնէր եւ նոր ի նորոյ կը գրենք : Մենք որ հիմակ ընթերցարանի 200 ոսկիին վրայ պիտի նստինք , ընկերութեան նպատակը պիտի փոխենք , չ'արժէր որ տեսարակն ալ փոխենք :

ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . — Ի՞նչ խենդ ու խելացի բաներ կը խօսիս . միթէ կարելի է ընկերութեան հոգին անոր ձեռքին մէջ թողուլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Այո՛ , կարելի չէ , որովհետեւ առանց այն պաշտօնական գրութեան մեր դիրքն անվաւեր է :

ՄԱՐԻՄԵԱՆ ԷՖ . — Մանաւանդ Ընկերութեան գոյութենէն ի վեր չորս ընդհանուր ժողովներու և երկու շրջանի Տնօրէն ժողովներու հաստատուած արձանագրութիւնները կան այն ՈՍԿԻ մատենաներուն մէջ :

ԱԳՍՊԵՆ ԷՖ . — Իրաւունք ունիք , բայց մարդը չ'ուզէր յանձնել :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լճնորա 8 սեպտ . — Թայնը կը ծանուցանէ որ Լորտ Ռոպրթսի վերադառնալու ժամանակը մօտեցած է : Անշուշտ իրեն հետ պիտի մեկնին նաև Լորտ Բիչներ Սըր Ռ . Պըլլըր , և ամենէն փորձառու ժեներալներէն շատերը , որոց փորձառութիւնը հարկաւորէ պատերազմական հաստատութեան ազգու և անյապաղ կարգադրութեան ձեռնարկելու համար : Կը յուսացուի որ Լորտ Ռոպրթս և Լորտ Բիչներ պիտի աշխատակցին պատերազմական նախարարութեան վերակազմուելուն :

Լճնորա 9 Սեպտ . Տէրութիւնները համաձայն են Չինաստանը չ'ըմբռնելու , և հող չ'գրաւելու մասին : Պիտի պահանջեն միայն արգարացի հատուցում մը գործուած անկարգութեանց համար և լուրջ երաշխաւորութիւններ անոնց չ'կրկնուելուն համար առանց որոյ բրիտանական կառավարութիւնը չ'պիտէ ձգէ արդէն ձեռք անցուցած առաւելութիւններէն ոչ մին , կամ չ'պիտի պարպէ նուաճած հողերուն ոչ մէկ մասը :

Լճնորա 10 սեպտ . — Պօէրները դարձեալ գրաւեցին Բէթլէհէմ , Փուրէսպուրկ , Սէնէկալ և Լէտիպրէնտ քաղաքները , զոր Անդրիացիք պարպած էին :

Լճնորա 10 սեպտ . — Ժամտախտի երկու նոր դէպքեր կը ծանուցուին Կլասկոյի մէջ :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

| | | | | | |
|------|------|------|------|------|------|
| 6092 | 3685 | 2368 | 4238 | 3938 | 4126 |
| 3586 | 612 | 4291 | 792 | 8357 | 8260 |
| 4102 | 8450 | 6042 | 4691 | 308 | 843 |
| 242 | 6707 | 4482 | 1964 | 5335 | 2594 |
| 7592 | 3346 | 3022 | 1459 | 12 | 6170 |

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Այդ յանձնել չ'ուզելն է որ շիղերուս կը զարնէ
ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . — (բուռնցնեց խոսքը) այդ անպիտանը ջախջախելու է
ՀԱՊԻՊԵՆ ԷՖ . — Այս գործը պէտք է ընդհանուր դատախազին յանձնել :
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Այդ կերպով գործը կերկարի . կարելի չէ՛ համոզական միջոցներով կարգադրել :
ԱԳՍՊԵՆ ԷՖ . Անգամ մ'ալ ուրիշ մէկը զրկելով փորձեցէ՛ք :
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Կ'առաջարկեմ որ Շաթեան եւ Թաթեան Էֆէնտիները , ի սէր ընկերութեան այս պաշտօնը յանձն առնեն :
ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . Գա՛ւ լիցի , որ ես այն դասակարգի մարդկանց նետ տեսնուիմ . Թաթեան Էֆէնտի եթէ ուզէ կրնայ մասնակցիլ կամ ոչ :
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Երբ դուք չէք զիջանիլ ինծի ի՞նչպէս կ'առաջարկէք
ՇԱԹՕԵԱՆ ԷՖ . — Այդ ատենադպիրը ձեռքս իյնար բզբոյէի
ԹԱԹՕԵԱՆ ԷՖ . — Խզտէի
ՀԱՊԻՊԵՆ ԷՖ . — Այդպիսի յուզուելու հարկ չ'կայ , եթէ տեսարակները անպատճառ առնել պէտք է կը բողոքենք : (Միայն թէ՛ մեր ըրածները . կարծեմ . շատ աւելի բողոքուելու արժանի է) :
ՄԱՐԻՄԵԱՆ ԷՖ . — Ամենէն օրինաւոր միջոցն ալ այդ է :
ԱԳՍՊԵՆ ԷՖ . — Երբ իմ համոզիչ խօսքերս ապարդիւն մնացին պարտաւորեցայ սպասուելու . նա ալ ըսաւ թէ ինքը նոր աշխարհի ճգոք պետութեան ամենախոնարհ հպատակն է :
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Երանի՛ թէ այդպէս լինել . նոյն տէրութեան զեպպանը իմ ամենամտերիմ բարեկամս է
(Շարունակելի)

Ա Ձ Դ

Գլխի Օրօր գիւղի Աղբայրներէն Տիար Մարտիրոս Շանօեանի որդի Պ. Կարապետ Շանօեան 26 ամեայ Երիտասարդը Հայաստանի Գեղարքներէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէական ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ր կը գտնուի այդ Երիտասարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ Երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ չնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նըմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պայտին եւ Նուագածուաց խմբի Զօրանոցին ճիշտ դիւնացը

ՕՂԱՆԵԼՍ ՄԻՍՈՆԵԱՆ • ԵՒ

ԴԱՆԵԼ, ՀԱՅՎՈՐՈՒՄԵԱՆ ԲՆԿ •

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օդ ծծելով գուարճանալու և զովարարութեան յոգնած մտքերը կազդուրելու համար, կրնան դիմել ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով զարգարած և յաճախորդաց հանգիստը ինկատի ունենալով պատշաճագոյն վիճակի մը մէջ գըրած է :

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները. ընտիր և թարմ՝ օշարակներ, անխարդախ սուրճ և անխառն կաթ :

Մասնաւոր խնամքով կը պատրաստուին ան անհրաժեշտ և չամշարակ (խոշալ) :

Հին դիմող յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խտտապահանջները գոհացնելու աստիճան :

ՀԱԿԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և Կեղինակաւոր երաժիշաներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել վաճառողներն կամ բաժանորդագրուիլ ուղղուներն, կրնան դիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրինին :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Հիմնաւ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՆ ԱԶԻԶԻ ՍԿԻՋԲԸ

Օսկանիյի դեղատանին դիւնացի փողոցին մէջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 : ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցելատեր, Երջարեւակներ, Գիտեր, Հրատարար, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԵԻԿ ԵՆ :

—Մեր մրցակիցներուն արդէն մեզմէ առած դասերէն օգտուիլը տեսնելով այս անգամ բոլորովին նոր բան մը սորվեցուցած ըլլալու գոհունակութիւնը վայելելու համար, ԱՐՇԱԼՈՅՍԻ «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ» ին վրայ երկու նոր ճիւղ ևս աւելցուցինք. այն է՝ ԳՐԱՏՈՒՆ, ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՈՒՆ : Հիմնաւ 1 Սեպտեմբեր 1900 :

Ա պօս անքանիստ ապի՛ւ... : Ու մեր կողմանէ կ'աւելցնենք հպարտօրէն.

Ընթօրինակողներ, մեր հետեւեալ տվորութիւնը անքերի՛ գործարեցե՛ք :

ՀԱՅ ՃԱՅԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂԱՐԱՐ ԳԱՋԱՆՁԵԱՆ ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍԱՊԱՀ

Նեով. — Իւնիսիսիսի Դեղատանին դիւնացը

Որ և է կերակուր խորտակած և սընընդարար ըլլալու համար պէտք է, մսի, իւղի, բանջարեղինաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համազմամբ որ անդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ով որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրելի արտադրելի թշնամանանք կ'ընէ :

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին :

Գիներն ԳԻՒՐՄԱՏՉԵԼԻ ԵՆ :

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Ա Յ Յ
Կ Ե Ն Ա Ց Ա Պ Ա Յ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ա Մ Ե Ն Ե Ն Հ Ա Ր Ո Ւ Ս Ե Ե Ե Ի Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ը
Ե Ր Ա Շ Ի Ա Ի Ո Ր Ե Ա Լ Գ Ր Ա Մ Ա Գ Լ Ո Ւ Ի 1 Մ Ի Լ Ե Ա Ր 437 Մ Ի Լ Ի Ո Ն

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընտրութեան մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իԳահիրէ

ՏՕՐԹ. Ա. Յ. ԳԵՐԵՍՈՒԹԻՅԱՆ

Ի Շարիա Գոթ-Պոյ, թիւ 20

Իր ՁՐԻ խորհրդակցութիւնները սակից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9 էն 11 օրոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ ի գիտութիւն իրեն դիմել ուզող աղքատ հիւանդներու :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Մերունի Տիար Ս. Ֆելէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ՎԵՅՅԵՐՈՐԻ Փօրման ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան դիմել «Արշալոյս» ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

| | | | | | |
|------|------|------|------|------|------|
| 104 | 8435 | 7724 | 3402 | 7037 | 1289 |
| 2629 | 327 | 9808 | 9246 | 2105 | 877 |
| 978 | 2739 | 9184 | 6499 | 2891 | 1639 |
| 8725 | 8221 | 5949 | 7921 | 2582 | 3056 |
| | 7317 | 9225 | 3559 | | |

ՏՕՐԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ապսին Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակումներ :

Կը գաղթեցնէ վայրկեանապէս ակոյսի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակումներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ճրի գարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Այլապահ մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ յ'Աղեքսանդրիա :